ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» ապրիլ 2025թ. ՆՄՈ/459-Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 20-ի N340-Ն որոշման 5-րդ կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 2-ի N1149 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրի 4-րդ փողոցի NN 1 և 3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում փաստացի բնակվող, տիրապետող կամ օգտագործող բնակիչների բնակարանային պայմանների բարելավման գործընթացի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Ապիտոնյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալինա Հովհաննիսյանին և

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղի վարչական ղեկավար Վաղուշ Մուրադյանին (համաձայնությամբ):

3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա□ Ապիտոնյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-04-08 12:21:54 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի ապրիլի 07-ի
N ՄՈ/459-Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ՝
Ասթինե Ապիտոնյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական՝
Երվանդ Խաչատրյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ՝
Արայիկ Հակոբյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝
Լիաննա Հարությունյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝
Գևորգ Գևորգյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝
Վարդան Ալեքսանյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի

քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ինժեներ՝
Խորեն Սարուխանյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝
Ռաֆիկ Երվանդյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ ճարտարագետ ՝
Վանուհի Խալաթյան.

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

08.04.2025

VERIFIED OCSP 08.04.2025 12:16:02 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023